ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

26-ը նոյեմբերի 2013թ.

Նախագահ՝ Ա. Վ. Ցուցուլյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 8 անդամներ: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *II ընթացիկ քննությունների և ստուգումների գրաֆիկների հաստատում:*
   /զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/
2. *2013-14թթ. ուստարվա I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում:*
   /զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/
3. *Մանկավարժական պրակտիկաների ամփոփում:*
   /զեկ. Ա. Շ. Մարգարյան, Է. Կ. Օսիպովա/
4. *Որակի ապահովման հանձնախմբի ստեղծում:*
   /զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ներկաներին ներկայացրեց, որ ըստ ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի նախատեսված էր երկու հարց: Սակայն կապված ուսումնական պրոցեսի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից օրակարգում դրվել է չորս հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Ցուցուլյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2013-14թթ. ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Անցկացվեց ընդանուր քննարկում և առաջարկվեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2013-14թթ. ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2013-14թթ. ուստարվա I կիսամյակի ստուգարքային շրջանի, քննաշրջանի և կոնսուլտացիաների

ժամանակացույցը՝ 09.12.2013թ.-24.01.2014թ., որը կազմվել է համաձայն ուսումնական պլանի: Նա ընգծեց, որ բազմիցս քննարկվել է ամբիոններում և խմբերում:

Զեկուցողը հանձնարարեց ամբիոններին վերանայել հարցաշարերը, քննական տոմսերը կազմել անցած նյութի հիման վրա: Քննաշրջանը կազմակերպել ըստ հաստատված ժամանակացույցի, իսկ դեկանատին՝ սահմանել հսկողություն, քննաշրջանը անցկացնել ուսումնական պրոցեսին համապատասխան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ. Ա. Զաքարյանը, Ա. Զ. Ալավերդյանը, Գ. Վ. Գուլակյանը: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2013-14թթ. ուստարվա I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը:

Օրակարգի երրորդ հարցի մասին խորհրդի նախագահը զեկուցման համար ձայնը տրվեց «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության մանկավարժական պրակտիկայի ղեկավար Ա. Շ. Մարգարյանին: Նա մանրամասնեց պրակտիկայի ընթացքի տևողության և մասնակցության մասին, ընդգծելով, որ պրակտիկային մասնակցել են բոլոր 12 ուսանողները: Մանկավարժական պրակտիկան եղել է ակտիվ և պասսիվ 40% և 60% համամասնությամբ: Ներկայացվել են համապատասխան օրագրերը և դպրոցից տրվող կարծիք բնութագրերը: Այնուհետև ձայնը տրվեց «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության մանկավարժական պրակտիկայի ղեկավար Է. Կ. Օսիպովան: Նա ևս ներկայացրեց, որ թվով 8 ուսանողներ ներկայացել են պրակտիկային, մասնակցել են դասերին, ընդգրկվել են դասավանդման պրոցեսում և ներկայացրել են համապատասխան օրագրեր և փաստաթղթեր:

Օրակարգի չորրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ներկայացրեց, որ ընտրելու ենք որակի ապահովման հանձնախումբ, որը զբաղվելու է ֆակուլտետի որակի ապահովման գործընթացների կազմակերպմամբ: Այնուհետև առաջարկեց հետևյալ կազմը.

1. Դավթյան Նարինե
2. Քամալյան Հայկ
3. Հովսեփյան Արա
4. Մարդանյան Արթուր
5. Մելիքյան Մելինե

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ. Ս. Գասպարյանը, Է. Կ. Օսիպովան, Մ. Ա. Զաքարյանը: Նրանք ևս համակարծիք էին ներկայցված ցուցակին և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել որակի ապահովման հետևյալ հանձնախումբը.

1. Դավթյան Նարինե
2. Քամալյան Հայկ
3. Հովսեփյան Արա
4. Մարդանյան Արթուր
5. Մելիքյան Մելինե

ՆԱԽԱԳԱՀ **Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**